

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻԱՆՆԱ ՄԻՀՐԱՆԻ ՕՀԱՆՅԱՆ

**ԱՆԳԼԵՐԵՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ
ԽՈՍՔԻ ՈՐԱԺԱՆՐԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ժ.02.07- «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների ֆեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ն.Հ. ԳԱՄՊԱՐՅԱՆ**

Պաշտոնական ղոկտոր, դոցենտ **Շ.Հ. ՊԱՐՈՆՅԱՆ**

ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ս.Ա. ՉԱԼԱԲՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովի. Թումանյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 14-ին,
ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009
«Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Ե.Լ. ԵՐԶՆԿՅԱՆ

Սույն ատենախոսությունը նվիրված է գիտական ոճի ինքնատիպ դրսևորումներից մեկի՝ բժշկագիտական խոսքի լեզվատրամադարանային յուրահատկությունների քննությանը: Ուսումնասիրության **առարկան** բժշկագիտական խոսքն է, որի քննության շրջանակներում անդրադարձել ենք անգլերեն բժշկագիտական տեքստերի լեզվատրամադարանային առանձնահատկություններին, տերմին-շարույթների ոճակագրիչ դերի քննությանը, բժշկագիտական տեքստում նվազագույն շարահյուսական միավորի քննության խնդիրներին:

Ուսումնասիրությունն ուղղված է ոչ միայն հատակորեն ցույց տալու բժշկագիտական խոսքի տեղը գործառնական ոճերի համակարգում, այլև պարզաբանելու, թե ինչպիսի լեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցության շնորհիվ է այն տարբերակվում գիտական գործառնական ոճի այլ դրսևորումներից: Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է բժշկագիտական խոսքի գործառնական-ոճական քննության և գործառնական ոճերի շարքում դրա տեղի որոշարկման անհրաժեշտությամբ, մասնավորապես այսօր գիտական և հատկապես բժշկագիտական միջազգային համագործակցության աննախադեպ աճի պայմաններում:

Ատենախոսության **նպատակն** է հետազոտել խոսքի կազմավորման համակարգերը, նաև խոսքային գործունեության կանոնները կիրառման տարբեր ոլորտներում, պարզել բժշկագիտական խոսքի՝ որպես համակարգի էական և տարբերակիչ առանձնահատկություններին վերաբերող հարցեր, տվյալ բնագավառին հատուկ գրավոր խոսքի յուրահատկությունները պարզաբանող մի շարք խնդիրներ, բացահայտել բժշկագիտական տեքստի բնութագրական գործառնական գծերը, նրա տեղն ու դերը գործառնական ոճերի բարդ ու խայտաբղետ համակարգում՝ խնդիրն ուսումնասիրելով արտալեզվական գործոնների հենքի վրա: Նպատակ ենք հետապնդում նաև ցույց տալու, որ մինչև այժմ անհրաժեշտ ուշադրության չարժանացած տվյալ բնագավառը հետաքրքիր նյութ է տալիս ոճաժանրային ուսումնասիրության համար: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հանգամանքը, որ տերմինաբանական յուրահատկության շնորհիվ նշված բնագավառը կարող է դիտարկվել իբրև գիտական գործառնական շրջանակներում գործող ինքնուրույն ենթաոճային դրսևորում՝ մասնավորապես նրանում առկա բառապաշարի շերտերի համամասնության տեսանկյունից:

Ատենախոսության **հիմնական նպատակին** հասնելու համար աշխատանքում առաջ են քաշվում հետևյալ **խնդիրները**.

1. Տարբերակել բժշկագիտական խոսքի տեղն ու դերը գործառնական ոճաժանրային տիրույթում՝ հենվելով գիտական գրավոր արձակի ուսումնասիրության ոլորտում արված նախորդ ուսումնասիրությունների տեսագործնական արդյունքների վրա, ուշադրության կենտրոնում պահելով բժշկագիտական խոսքում առկա տերմինաբանական միավորները:

2. Քննել բժշկագիտական արձակում իրացվող խոսքի հիմնական գործառնականները՝ սահմանելով դրանց փոխներթափանցմամբ ստեղծված արդյունքը որպես նոր ոճաժանրային բնութագրիչ որակ:

3. Որոշարկել բժշկագիտական խոսքի նվազագույն գործառնական-հաղորդակցական միավորը և լեզվատրամադարանային վերլուծության մեթոդի կիրառմամբ՝ փորձել վեր հանել այն կայուն ճանաչողական-ոճակագրիչ տարրերը, որոնց առկայության շնորհիվ մեր ուսումնասիրության առարկա բժշկագիտական խոսքը կարելի է դիտարկել իբրև գիտական խոսքի ուրույն դրսևորում:

4. Հանակողմանի վերլուծության ենթարկել բժշկագիտական բնագավառում կիրառվող բառապաշարի շերտերը և դրանց հարաբերակցության դինամիկան՝ խնդիրը քննելով բժշկագիտական խոսքի գիտական բառապաշարի ոճակազմիչ առանձնահատկությունների դիտանկյունից՝ սահմանելով դրանց յուրահատուկ դերը և տարբերակիչ հատկանիշների խումբը՝ հարցը դիտարկելով ընդհանուր գիտականի հետ համեմատության հիմքի վրա:

5. Քննության առնել տերմինաբանությանն առնչվող մասնավոր խնդիրներ, որոնց պարզաբանումը թույլ կտա որոշարկել բժշկագիտական խոսքի գործառական-ոճական պատկանելությունը գիտական գործառական ոճի համակարգում:

6. Քննության առնել ճանաչողական արժեք ունեցող այն բառածևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են արտալեզվական հիմքով, որի շնորհիվ էլ բժշկագիտության բնագավառում առանձնանում է ընդհանուր գիտականից:

Հետագոտված փաստական նյութն ընդգրկում է գինեկոլոգիայի բնագավառում կատարված ամերիկյան գիտական ուսումնասիրություններ (շուրջ հազար էջ), ինչպես նաև բժշկագիտական բառարաններ¹:

Աշխատանքի **նորություն** նախ և առաջ պայմանավորված է բժշկագիտական խոսքի գործառական-ոճական բնութագիրը սահմանելու, խոսքի այդ տարատեսակի տեղը գիտական ոճի ընդհանուր համակարգում որոշարկելու փորձով: Նոր են նաև տերմինաբանական բառաշերտի յուրահատուկ գծերի և արտալեզվական տարաբնույթ գործոնների կարևորումն այս հարցում:

Մեր հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել գործառական ոճաբանության տարբեր խնդիրներ քննող գիտատեսական բազմաթիվ աշխատություններ, որոնք ներկայացված են ատենախոսության գրականության ցանկում: Ուսումնասիրության հիմնական մեթոդը **լեզվաոճական վերլուծության մեթոդն է²**, որը ենթադրում է լեզվական նյութի համակողմանի քննություն երկու տարբեր մակարդակներում՝ իմաստային (բառային, ձևաբանական, շարահյուսական) և վերնշանային (ոճական): Ըստ անհրաժեշտության կիրառվել են նաև **նկարագրական, բառարանային սահմանումների վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները, ինչպես նաև** լեզվական նյութի հետազոտման, մշակման և ներկայացման **«շրթայականության»** սկզբունքը³:

¹ Տե՛ս մասնավորապես Keye W. R. Jr. Laser Surgery in Gynecology and Obstetrics. 2nd edition Chicago, London, Boca Raton, Littleton, Mass. Year Book Medical Publishers, INC, 1990, Niswander K. R., Evans A. T. Manual of Obstetrics. 5th edition Boston, New York, Toronto, London. Little, Brown and Company, 1995, Eponyms in Obstetrics and Gynecology. <http://www.babymed.com/eponyms-obstetrics-and-gynecology>.

² Ахманова О. (ред.) и др., О принципах и методах лингвостилистического исследования. М., МГУ, 1966, Linguostylistics. Theory and Method: (ed. By O. Akhmanova), М., MGU, 1972, Akhmanova O., Zadornova V. On Linguopoetic Stratification Of Literary Texts. Tokyo, Poetika, 1977, № 7, Akhmanova O., Idzelis R. What's the English We Use? М., МУП, 1978, Гаспарян С.К. Лингвопоэтика образного сравнения. Ер., Лусакн, 2008, Գասպարյան Ն. Հ. Արտոնագրային մասնագրի լեզվաոճական առանձնահատկությունները, (ամերիկյան արտոնագրերի փաստական նյութի հիման վրա), Եր., Լուսակն, 2007 և այլն:

³ Այս մասին տե՛ս Смирницкий А.И. Лексикология английского языка. М., Изд-во Литературы на иностранных языках, 1956.

Հետագոտության արդյունքները ներկայացվել են ատենախոսի հրատարակած հոդվածներում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում, տեսական սեմինարներում:

Տեսական առումով ուսումնասիրությունը որոշակի ներդրում է գործառական ռճագիտության տեսության բնագավառում: Աշխատանքն ունի մաս որոշակի **կիրառական** արժեք: Այն կարող է օգտագործվել ռճագիտության և գործառական ռճագիտության հատուկ դասընթացների ու սեմինարների շրջանակներում, բժշկագիտական տեքստերի թարգմանության ոլորտում, ինչպես մաս նպաստել համապատասխան ուսումնական հաստատություններում անգլերենի գործնական ուսուցման մակարդակի բարձրացմանը: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև բժշկագիտական տեքստեր մոդելավորելիս:

Աշխատանքի կառուցվածքը. ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության, բառարանների և համացանցային էջերի ցանկից: Ներածությունն ու գլուխներից յուրաքանչյուրն ավարտվում են ծանոթագրություններով:

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության թեման և հիմնահարցերը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու ատենախոսության գիտական նորույթը, նրա տեսական և գործնական արժեքները:

Առաջին՝ **«Անգլերեն բժշկագիտական խոսքի գործառական ընդհանուր բնութագիրը»** գլխում ներկայացվում են գործառական ռճերի տեսական մշակման, խոսքային գործունեության, խոսքի գործառույթների և գործառական ռճերի փոխհարաբերություններին վերաբերող տեսակետներ, կարևորվում է գիտական ռճի տեղն ու դերն այդ համակարգում: Քննության են առնվում մաս արտալեզվական (մշակութային, սոցիալական և այլն) գործոններ, որոնց դերն անհնար է գերազանհատել այս ոլորտում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև բժշկագիտական խոսքը բնույթով տեղեկատվական է, սակայն հաղորդման գործառույթն այստեղ մաքուր ձևով չի իրագործվում, քանի որ ներգործման պահը նույնպես կարևոր է: Այն իրագործվում է տեղեկատվությունը հասցեստիորջը լիարժեքորեն հասցնելու ընթացքում: Այլ կերպ՝ տեղեկատվություն հաղորդելիս տեղի է ունենում մաս ներագրում, որն ավարտվում է համոզման գործընթացով: Համոզման գործառույթի իրացումն ուղղակիորեն կախված է այն հանգամանքից, թե որքանով է իրագործված ներագրումը, որը համոզման գործընթացի սկզբնական փուլն է և սպահովում է դրա իրականացումը: Հետևաբար, բժշկագիտական խոսքում նշված գործառույթները՝ հաղորդումն ու համոզումն, միևնույն երևույթի երկու անբաժանելի կողմերն են՝ սերտորեն փոխկապակցված:

Առաջին գլխում քննության են առնվում մաս բժշկագիտական խոսքը ներկայացնող գրավոր տեքստերին բնորոշ բառապաշարի շերտերի գործառական-ռճաժանրային յուրահատկությունները: Փորձ է արվում լուսաբանել դրանց առնչվող մի շարք էական խնդիրներ: Շեշտը դրվում է այն շարույթների վրա, որոնք ներկայանում են տերմինի կամ տերմին-բառակապակցությունների կարգավիճակով: Հարկ է նշել, որ գինեկոլոգիայի բնագավառը ներկայացնող անգլերեն տեքստերում բժշկագիտական տերմինների կողքին առկա տերմինակերպ կապակցությունները, պահպանելով իրենց իմաստային բովանդակությունը, նշված բնագավառի տեքստերի շրջանակում ձեռք են բերում լրացուցիչ իմաստներ՝ հարստացնելով այդ բնագավառի տերմինաբանական շերտը: Տերմինա-

կերպ միավորի⁴ կարգավիճակի կարող են հավակնել ընդհանուր գործածական բառապաշար ներկայացնող այնպիսի բառեր ու բառակապակցություններ, ինչպիսիք են *firm, smooth, age, size, four weeks from, the first examination* և այլն, որոնք գիտական գործառնական ոճի այլ դրսևորումներում հանդիպում են **ընդհանուր գործածական բառապաշարի տիրույթում**⁵:

Նյութի քննությունից ակնհայտ է դառնում, որ տերմինակերպ միավորները ճանաչողական նշանակություն ունեն բժշկագիտական խոսքի համար: Պարզվում է, որ ընդհանուր գործածական բառաշերտը քանակական առումով ավելի փոքր խումբ է կազմում, քան երկրորդ՝ ընդհանուր գիտական և երրորդ՝ մասնավոր գիտական՝ տերմինաբանական բառաշերտերը, այսինքն՝ բժշկագիտական տեքստը բառապաշարի շերտերի բաշխվածության առումով էպպես տարբերվում է բուն գիտականից: Ասվածը կարելի է հաստատել բազմաթիվ օրինակներով: Օրինակ՝

Estimation of gestational age by uterine size is one of the most important elements of the first examination. A normal non-gravid uterus is firm, smooth, and approximately 3x4x7cm. The uterus will not change noticeably in consistency or size until five to six weeks after the LMP, or four weeks from conception. Gestational age is estimated by uterine size in volume from the LMP (i.e., 8 weeks = 2xnormal size, 10 weeks = 3xnormal size, and 12 weeks =4xnormal)

Վերոբերյալ հատվածի վերլուծությունից պարզում ենք, որ անգլերեն ընդհանուր գործածական բառապաշարում հաճախակի հանդիպող *age, size, first, firm, smooth* բառերը բժշկագիտական խոսքում ձեռք են բերում լրացուցիչ իմաստներ՝ օգտագործվելով նշված *gestational age* (պտղի ներարգանդային տարիք), *uterine size* (արգանդի չափեր), *first examination* (առաջնային զննում), *normal non-gravid uterus* (նորմալ ոչ հղի արգանդ), *firm, smooth, uterus* (արգանդի պինդ, հարթ վիճակ) տերմինների և տերմինաբանական բառակապակցական շարույթների կողքին:

Կարելի է նկատել, որ բերված տերմինաբանական շարույթները զինեկոլոգիայի բնագավառի էական հասկացություններ են: *First examination* տերմինաբանական շարույթ-հասկացությամբ նշվում է այն ելակետը, որի հետ համեմատվում են ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք կարող են տանել կամ արդյունավետ բուժման, կամ վիճակի վատթարացման: Գինեկոլոգիայի բնագավառում բուժումն ու վիճակի վատթարացումը կարևոր զարգացումներ են, բայց ամենաէականն այստեղ պտղի նորմալ աճն է, որը դիտարկվում է արգանդի չափերի, պտղի ներարգանդային տարիքի փոփոխություններին զուգընթաց: *Firm, smooth, week* բառերը գործածվում են նշված օրգանի սկզբնական նորմալ վիճակը նկարագրելու համար: Հատվածում բերված քանակական թվականները տվյալ դեպքում առնչվում են արգանդի և ներարգանդային պտղի վիճակի փոփոխություններին ու զարգացումներին և ոճակազմիչ են: *LMP* (last menstrual period) տերմին-հասկացումը նշված տեքստահատվածում հենակետային է, քանի որ այս շրջանը վերաբերում է կնոջ վերարտադրողական կարգավիճակին: Առանց այդ շրջանը հաշվի առնելու հնարավոր չէ հետևել հղիությանն առնչվող զարգացումներին:

⁴ Тер-Минасова С.Г., Словосочетания в научно-лингвистическом аспектах, М., МГУ, 1988.

⁵ Akhmanova O.S.Idzelis R.F. What's the English We Use? M., Moscow University Press,1978.

Քննարկենք ևս մեկ օրինակ.

Common urine pregnancy tests used today are very sensitive and may be positive up to one week after implantation or within days of the (first missed) last normal menstrual period. The first voided morning urine is the most concentrated specimen for analysis. Radioimmunoassay for serum testing of the beta subunit of human chorionic gonadotropin (HCG) may be accurate up to a few days after implantation.

Վերը նշված բառային և բառակապակցական շարույթների քննությունը բացահայտում է, որ դարձյալ տեղի է ունեցել անգլերեն ընդհանուր գործածական բառաշերտից որոշակի բառերի (*common, tests, very sensitive, positive, the (first missed) last normal, first....morning, human, accurate, implantation*) անցում տերմինաբանության ոլորտ, այսինքն՝ նշված շարույթները տերմինակերպ են, ընդ որում *implantation* բառային շարույթը հետաքրքրական է այն առումով, որ բժշկագիտության մեջ ընդհանրապես այն ներկայացնում է օրգանի փոխպատվաստում, մինչդեռ բժշկագիտության մասնավոր բնագավառ հանդիսացող գինեկոլոգիայում գործածվում է հղիության թեստերի հետ կապված և նշանակում է լակմուսի թղթով պատված ձողիկի ընկղմումը մեզի մեջ: *Very sensitive, positive* տերմինակերպ շարույթները ձեռք են բերում լրացուցիչ իմաստներ: Առաջինը (*very sensitive*) ցույց է տալիս, թե որքան մեծ է հղիության թեստի որակական հավանականությունը, իսկ երկրորդը (*positive*) ազդարարում է հղիության առկայություն, ընդ որում *positive* բառային շարույթը կարող է թեստի դրական արդյունքի առումով օգտագործվել նաև այլ բնագավառներում: *The last normal, the first missed* բառակապակցական շարույթները, ըստ էության, ազդարարում են որոշակի ցիկլեր, այսինքն՝ թե որ շաբաթվա որերորդ հատվածում է տեղի ունեցել բեղմնավորումը, այսինքն՝ որ օրվանից պետք է հաշվել հղիությունը: *The first voided morning urine* շարույթում *first morning* բառերն ունեն թեստի համար խիստ կարևոր նշանակություն, հետևաբար, ճանաչողական արժեք ունեն, քանի որ, ինչպես նշում են մասնագետները, հենց առավոտվա մեզն է պիտանի ճշգրիտ արդյունք ստանալու համար:

Այսպիսով, մույնիսկ անգեն աչքով երևում է, որ մասնագիտական տերմինաբանության քանակական առումով ավելի ծավալուն գործածությունը և տվյալ բնագավառում ճանաչողական նշանակություն ունեցող տերմինակերպ միավորների բազմությունը բժշկագիտական անգլերենն առանձնացնում են ընդհանուր գիտական ոճից:

Երկրորդ՝ «**Բժշկագիտական խոսքի քերականական յուրահատկությունները**» գլխում շեշտը դրվում է որոշակի ժամանակաձևերի, եղանակավորող բայերի, առավել հատկանշական էմֆատիկ-շեշտադրող կառույցների կիրառման առանձնահատկությունների վրա:

Բժշկագիտական խոսքում լայն գործածություն ունեցող բայի անորոշ ներկան (*the Present Indefinite*) կիրառվում է թե՛ ներգործական և թե՛ կրավորական կառույցներում, իսկ վաղակատար ներկան՝ հիմնականում կրավորական կառույցներում: Բժշկագիտական խոսքում նշված ժամանակային ձևերի կիրառության առանձնահատկությունները պայմանավորված են այդ բնագավառին բնորոշ արտալեզվական հատկանիշներով: Ասվածն ավելի մանրամասնելու և ակնհայտ դարձնելու նպատակով բերենք օրինակներ.

The diagnosis is based on biopsy, either colposcopically directed or obtained directly from suspicious exophytic lesions. The diagnosis should be considered in any woman with unexplained vaginal bleeding especially if the bleeding occurs after sexual intercourse.

Վերը բերված հաստատում **is based** ներկա անորոշի կրավորական ձևը (the Present Indefinite Passive) մատնանշում է այն իրադրությունը, որը ծառայում է որպես հիմք ճշգրիտ ախտորոշման համար, իսկ պայմանի երկրորդական նախադասության մեջ կիրառված **occurs** ներկա անորոշի (the Present Indefinite) ձևը ցույց է տալիս հաճախ հանդիպող անցանկալի ախտանիշի առկայություն: Եղանակավորող բայով կազմված *should be considered* կրավորական ձևի ընտրությունը պատահական չէ. ստեղծված իրավիճակում առկա է բժշկին անհասպող և ճիշտ ուղղորդելու միտումը:

Բժշկագիտական խոսքում ներկա վաղակատարի գործածությունը նպատակ ունի ցույց տալու նախորդ փորձի և ներկայի հարաբերակցությունը, ընդգծում է նախորդ փորձով հաստատված երևույթի էական լինելը ախտորոշման և բուժման գործում: Փորձենք օրինակի միջոցով պարզաբանել վերը նշվածը.

Epidural anesthesia has no significant effect on the progress of labor. It has not been demonstrated to affect the uterus directly but contractions may decrease in intensity or frequency after initial catheter placement.

Has not been demonstrated ներկա վաղակատարի ժխտական ձևը բացառության տեղ չի բողոքում՝ շեշտելով երկար տարիների ընթացքում փորձի միջոցով ստացված նշանակալի ձեռքբերումները:

Եղանակավորող բայերի գործածությունը դիտարկվում է իբրև բժշկագիտական անցյալի գործառական-ոճական հատկանիշ: Բժշկագիտական խոսքում եղանակավորման կարգը դրսևորվում է հիմնականում *may* և *should* եղանակավորող բայերի գործածությամբ: *May*-ը ներմուծում է հնարավորության գաղափարը, երբ հիվանդությանն առնչվող բոլոր դեպքերն ուսումնասիրված չեն, իսկ *should*-ը, ինչպես վերևում նշեցինք, միտում ունի խորհուրդ տալու, ուղղորդելու, ընդգծելու նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը:

In mild cases of herpes gestations, symptomatic therapy with oral antihistamines and topical steroids may be sufficient.

Salpingectomy should be performed if future fertility is undesired (e.g. ectopic pregnancy after tubal ligation), if rupture has destroyed the tube, or if there is persistent hemorrhage after attempted salpingostomy.

Բժշկագիտական խոսքում տեքստը կազմող միջոցների խնդրին անդրադառնալիս պետք է հատկապես նշել **Էմֆատիկ-շեշտադրող** կառույցների դերը: Մեր օրինակներում հատկապես հաճախակի են հանդիպում **although, with, even with, still** բառերով սկսվող նախադասություններ, **in ...** կառույցով ներմուծվող տեղի պարագա կապակցություններ և այլն: Օրինակ՝

Although the surgery-to-conception interval tended to be shorter in the laser group, the difference did not achieve statistical significance.

Still no difference could be shown in the two techniques.

Even with the needle cautery, there is a sense of pressure perceived as one contacts the tissue with the cautery tip.

In the 73 patients having repair of hydrosalpinges, 88% had at least one tube or their only remaining tube patent on follow-up hysterosalpingogram or laparoscopy.

Նշված քերականական ձևերը բժշկագիտական խոսքի համար ոճակազմիչ են և ունեն ճանաչողական արժեք:

Երրորդ՝ «Տերմինների գործառական-ճանաչողական արժեքը անգլերեն բժշկագիտական խոսքում» գլուխը բաղկացած է 5 ենթագլուխներից, քննարկվում են անգլերեն բժշկագիտական խոսքում տերմինների գործառական-ճանաչողական արժեքին առնչվող խնդիրներ: Բժշկությունը մարդկային գործունեության հնագույն բնագավառներից է, հետևաբար բժշկագիտական տերմինաբանությունն արդեն վաղուց կայացած բառապաշար է, սակայն բժշկության մեջ անընդհատ հայտնվում են բազմաթիվ նոր գիտական հասկացություններ և տերմիններ, բազմաթիվ հին տերմիններ այս կամ այն փոփոխությունն են կրում, ինչը հնարավորություն է տալիս անգլերեն բժշկագիտական նյութի վրա հետևել տերմինաբանության զարգացման միտումներին և նրա ձևավորման ուղիներին, լեզվական անվանակարգման օրենքներին⁶: Բժշկագիտությունը, ինչպես և գիտության յուրաքանչյուր բնագավառ, ունի իր տերմինաբանական համակարգը, և քանի որ այդ համակարգում գործող տերմինը պարունակում է որոշակի գիտական, մասնագիտական տեղեկատվություն, գիտության լեզվում այն դառնում է անփոխարինելի: Տերմինները թույլ են տալիս միտքը շարադրել հակիրճ և ճշգրիտ, ընդ որում բժշկագիտական խոսքը, համեմատած գիտական խոսքի այլ բնագավառների հետ ընդհանրապես, ունի տերմինաբանական միավորների ընդգծված լայն կիրառություն:

Ինչպես արդեն ի ցույց է դրվել նախորդ գլխում, անգլերեն բժշկագիտական տեքստերի քննության օրինակով, տերմինների օգտագործման հաճախությունը կախված է խոսքի հասցեավորումից և շփման նպատակից, այլ կերպ ասած՝ արտալեզվական գործոններից: Տերմին կարող է լինել ինչպես բառը, այնպես էլ բառակապակցությունը: Ինչպես հայտնի է, բառ-տերմինների թվում հանդիպում են միայն ինքնուրույն խոսքի մասերը, առաջին հերթին գոյականները, անձան չափով բայերը, ածականները և մակբայները: Տերմին-բառակապակցության կենտրոնական բառը սովորաբար գոյականն է (*uterine rupture, scarred uterus, cesarean section, fetal distress, hemorrhage, or fetal death*), կամ բայը (*to replace the uterus, to reinvert the uterus, to permit uterine relaxation*):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերեն բժշկագիտական տերմինաբանության համար առավել բնորոշ են բառային սկզբնատառային հապավումները, օրինակ՝ *BP (blood pressure)*, *CV (cardiovascular)*, *TEN (toxic epidermal necrolysis)*, *NSAID (non steroidal and inflammatary drug)*, *HDV (hepatitis delta virus)*, *HBV (hepatitis beta virus)*, *ICP (intrahepatic cholestasis of pregnancy)*, *PIH (pregnancy-induced hypertension)*, *AFLP (acute fatty liver of pregnancy)*:

Տերմինները կարող են լինել նաև խառը տիպի՝ կազմված սկզբնատառային և վանկային տարրերի համակցություններից, սակայն դրանք սակավաթիվ են: Դրանցից են տառ-բառային հապավումները՝ կազմված սկզբնատառերից և ամբողջական բառից, օրինակ՝ *C virus (Coxsackie virus)*, *x-ray (electromagnetic radiation)*, *CT-scan (computed tomography)*, *V-Q lung scan (ventilation perfusion lung scan)*, տառ-վանկային հապավումները՝ կազմված սկզբնատառերից և վանկային տարրերից, օրինակ՝ *N-pros (nervous prostration)*:

Այսպիսով՝ բժշկագիտական խոսքում տերմինաբանության քննությունը բացահայտում է, որ այն գործառական-ոճական հատկանիշի կրող է:

⁶ Бекишева Е.В. Формы языковой репрезентации гносеологических категорий в клинической терминологии. // Автореф. дисс. док. фил. наук; М., Ин-т языкознания РАН, 2007.

Երրորդ գլխի՝ «**Հումալատինական ծագում ունեցող բժշկագիտական տերմինների քննություն**» ենթագլուխը նվիրված է հումալատինական տերմինների կիրառությանը բժշկագիտական խոսքում: Բժշկության բազմադարյան զարգացման ընթացքում մեծ է եղել լատիներենի դերը: Ոչ պակաս կարևորվել է նաև հին հունարենի բառապաշարի հարուստ ժառանգությունը: Դարերի ընթացքում բժշկության ամենատարբեր բնագավառների հեղինակությունները հարստացրել են հումալատիններեն տերմինաբանությունը: Բժիշկների և դեղագետների համար լատիներեն ու հին հունարեն լեզուները հատուկ նշանակություն և կիրառում ունեն: Բժշկագիտական տարբեր բնագավառների տերմինաբանության մեջ կան շատ հունարեն և լատիներեն հոմանիշներ, ընդ որում անատոմիական (*articulatio*) և դեղաբանական (*aqua*) տերմինները հիմնականում լատինական ծագում ունեն, իսկ ախտաբանական (*hydor*) տերմինները՝ հունական:

Երրորդ գլխի՝ «**Տերմին-էպոնիմների գործառական արժեքը բժշկագիտական խոսքում**» ենթագլխում քննության ենք առել տերմին-էպոնիմների գործառական արժեքը բժշկագիտական խոսքում՝ փորձելով ցույց տալ, որ այս ոլորտի տերմինաբանության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում **տերմին-էպոնիմները**⁷, որոնք դեղամիջոցի կամ հիվանդության անվանումներ են՝ ածանցված մարդկանց անուններից (*Hippocratic face/facies Hippocratica (cachexia)*, *Botkin's disease*, *Filatov's disease*, *Quinke's edema*, *Virchow's metastases*, *the disease of Hercules* և այլն):

Էպոնիմները բառապաշարային միավորներ են, որոնք որոշակի իմաստաբանական բացթողումներ են լրացնում լեզվում: Դրանց հիման վրա ծագում են վառ, ազգային գործոնով պայմանավորված ճանաչողական ընկալումներ, որոնք արտացոլում են աշխարհի էթնիկական պատկերի յուրահատկությունները:

Բժշկագիտական տերմին-էպոնիմները կրում են հայտնի գիտնական-բժիշկների անուններ, որոնք հետագոտել են տվյալ նյութը, հրատարակումներ ունեն դրա վերաբերյալ կամ պարզապես առաջինն են նկարագրել տվյալ հիվանդության ախտանիշները, կիրառել են ախտորոշման կամ բուժման այդ եղանակը⁸: Օրինակ՝

Breech presentation may be diagnosed by Leopold's maneuver, vaginal examination, or ultrasound. The point of reference in describing the position of the breech is the sacrum.

The impeding factor of most shoulder dystocias is the impaction of the anterior shoulder beneath the symphysis pubis. Many shoulder dystocias will resolve with the McRoberts maneuver, which consists of flexing the thigh at the hips and pulling them to the maternal abdomen.

Մեծ խումբ են կազմում բժշկական տերմին-հատուկ անունները, որոնք արտացոլում են օրգանի առանձին մասերի, հյուսվածքի, բջջի անվանումներ, ուսումնասիրության առավել տարածված եղանակներ, կամ լայն ճանաչում գտած գիտական հայտնագործություններ, ինչպես օրինակ՝ **Fallopian tube** –

⁷ Рылов Ю.А. Имена собственные в европейских языках. // Ю.А. Рылов. М., АСТ: Восток-Запад, 2006, Дубровина Л.В. Английские медицинские терминологические сочетания с именем собственным. // Стиль научной речи. М., Наука, 1978.

⁸ Блейхер В.М. Эпонимические термины в психиатрии, психотерапии и медицинской психологии. Словарь, Киев, Вища школа, 1984, Голота В.Я. Эпонимы в акушерстве и гинекологии. // Медицинская литература. Медпресс-информ, 2005.

Ֆալոպյան փողոն – սերմնաբջջի ուղին՝ դեպի արգանդի հատակ, *Golgi cell* – Հոլջիի բջիջը – կենտրոնական նյարդային համակարգում առկա բազմաբևեռ նեյրոններ և այլն:

Բժշկագիտական խոսքում, մասնավորապես գինեկոլոգիայի բնագավառում, էպոնիմների կիրառումը կարող է զուգակցվել որոշակի բժշկական հմտությունների, միջամտությունների ու հնարների հետ: Օրինակ՝

Smellies' manoeuvre (Mauriceau-Levret manipulation) – միջամտություն, որի անհրաժեշտությունը ծագում է պտղի հետույքային դիրքով ծննդաբերության ժամանակ, երբ առավել մեծանում է բժշկի դերը:

Zavanelli's manoeuvre – մանկաբարձական միջամտություն. այն դեպքում, երբ նորածնի գլուխը հայտնվելուց հետո, ուսերը ֆիքսվում են, և ծննդաբերությունը թե՛ նորածնի և թե՛ մոր կյանքի համար խիստ վտանգավոր է դառնում:

Sim's position (James Marion Sims) – դիրք, որը հեշտացնում է գինեկոլոգիական զննումը:

Ստորև բերվող հասկածում **Trendelenburg's position** տերմին-էպոնիմը նշում է որոշակի իրավիճակ, որն առնչվում է երկվորյակներից երկրորդի՝ նորմալից ցածր քաշով լույս աշխարհ գալու հետ: Մայրը չի կարողանում ծննդաբերել երկրորդ երեխային վերջինիս ցածր քաշի պատճառով և նրան պատրաստում են կեսարյան հատման, որի ժամանակ ապահովում են մոր որոշակի դիրքը (*Տրենդելենբուրգի դիրք*):

Umbilical cord prolapsed occurs more commonly with breech presentations, low birthweight, and second-born twins. It may occur with artificial rupture of the membranes if the head is not well applied to the cervix. While a hand holds up the presenting part and the patient is placed in **Trendelenburg's position**, preparations are made for emergency cesarean section.

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում էպոնիմ-հոմանիշները, որոնք բժշկագիտական տերմինաբանության մեջ մեծ թիվ են կազմում, ինչպես օրինակ՝ *Bazedow's disease*, *Graves' disease*, *Flajani's disease*, *Parry's disease* – դիֆուզային թունավոր խալիպ, *Botkin's disease*, *Hepatitis A, B* – Բոտկինի հիվանդություն կամ ինֆեկցիոն վիրուսային հեպատիտ և այլն:

Մեծ է այն տերմին-էպոնիմների տեսակարար կշիռը, որոնցում օգտագործվում են միանգամից մի քանի բժիշկների անուններ, որոնք միաժամանակ են նկարագրել այդ հիվանդությունները կամ նրանց ախտանիշները, ինչպես օրինակ՝ *Jackobson-Bechterev-Kempner syndrome*, *Khenda-Shiullera-Krischena-Zive syndrome*: Հաճախ միևնույն հեղինակի անունը վերագրվում է երկու և ավելի հիվանդությունների, ախտանշանների կամ դրանց համակցության, որոնք մա նկարագրել է, օրինակ՝ *Hippocratic oath, face, facies Hippocratica Hippocratic nails, Hippocratic hands, Hippocratic corpus, Pirogov's anesthesia, Pirogov's plastic-bone operation, Pirogov's amputation* և այլն:

Երրորդ գլխի՝ «Մասնագիտական տերմինների և տերմին-շարույթների գործառական արժեքը բժշկագիտական խոսքում» ենթագլուխը նվիրված է բժշկագիտական խոսքում տերմինների և տերմին-շարույթների գործառական-նճական արժեքի բնութայանը: Իբրև նվազագույն գործառական-հաղորդակցական միավոր՝ բժշկագիտական տեքստի համար սահմանում ենք շարույթը՝ ելնելով նրա գործառական-ճանաչողական արժեքից: Այս առումով առանձնացնում ենք գոյականական, ածականական, թվականական և մակբայական շարույթներ:

րը, որոնց շարքում զգալի կարևորություն ունի թվականական շարույթը⁹: Կարևորվում են թվականական այնպիսի արտահայտություններ, որոնք կապ ունեն հղիության շրջանի, դեղորայքի օգտագործման չափաբաժնի և դեղորայքի ընդունման ժամանակահատվածի հետ, ինչպես նաև՝ ներարգանդային շրջանի տարբեր ժամանակահատվածներում պտղի չափերի կամ նրա տարբեր մարմնամասերի միջև եղած համաչափության, նաև հղի կնոջ և պտղի քաշի թվային արտահայտման հետ: Թվականներով արտահայտված շարույթները մեծ նշանակություն ունեն նաև գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց սեռական օրգանների անատոմիական չափերի փոփոխությունների մասին տեղեկատվությունը (նշելու համար, քանի որ նրանք էական դեր ունեն բուժման ընթացքում տեղի ունեցող զարգացումները դիտարկելու և հսկելու գործում: Տերմին-բառակապակցական շարույթների բաղադրիչների իմաստային կապերի բացահատումն ավելի հեշտանում է, երբ այն կազմող բաղադրիչներն իրար հարակցվում են զանազան քերականական միջոցների կիրառմամբ, ինչպես օրինակ հետևյալ դեպքում. *the prevalence of the epilepsy* վերաբերություն ցույց տվող *of* նախդրավոր կառույցի շնորհիվ հստակեցված է *prevalence* և *epilepsis* բառերի իմաստային առնչությունը, ընդ որում այն ավելի հեշտ հասկանալի է ու թարգմանելի, քան եթե այդ բառերով կազմվեր հարադիր բարդություն:

Տերմին-բառակապակցական շարույթներում քերականական ձևակերպումը կարող է արտահայտվել ոչ միայն նախդրավոր կառույցների միջոցով (*transmission of gonorrhea, chlamidia, form of contraception*), այլև վերջաձանցներով ու վերջավորություններով (*regional anesthesia, intravenous form, retained placenta respiratory depression, cervical examination*): Վերջին երկու դեպքում գործ ունենք պարզ որոշիչ-որոշյալ հարաբերության հետ:

Բժշկագիտական տեքստերում հանդիպող միանդամ շարույթները սովորաբար նույնպես արտահայտված են գոյականով, օրինակ՝ *pregnancy, disease, varicella, acyclovir* և այլն:

Ուշագրավ է, որ թվականական և ածականական շարույթները մեր քննության նյութում էական նշանակություն ունեն: Այսպես, օրինակ՝ *first trimester of pregnancy, half of the patients, one third of patients, 25 percent of fetuses, mild abdominal pain, endemic area* և այլն, ընդ որում թվականական շարույթները մեր նյութում ճանաչողական կառույցի արժեք ունեն, քանի որ կարևոր տեղեկատվություն են փոխանցում: Մակբայական շարույթների մասին խոսելիս անհրաժեշտ է հիշատակել այն փաստը, որ վերջիններս, ինչպես ներքոհիշյալ օրինակներում, բժշկագիտական տեքստում որոշակի էական տեղեկատվության կրող են, հետևաբար կարող են դիտարկվել իբրև ճանաչողական տարրեր: Դրանք ոճատարբերակիչ և ոճակազմիչ գործառնույթ են կատարում: Այսպես՝

The ectopic pregnancy *usually* appears as a fusiform....

Culdocentesis is *rarely* indicated in the diagnosis of ectopic pregnancy.

Բժշկագիտական խոսքում հաճախ են հանդիպում *noun+of+noun* (գոյական+նախդիր+գոյական) (*the forcing of air into the vagina, aspiration of blood, sensitization of the maternal immune system, the effect of pregnancy, the sensitivity of the kidney, the situation requires resection of the bleeding tubal segment, the*

⁹ Ջահուկյան Գ.Բ. Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, Ասողիկ հրատ., 2003:

diagnosis of superimposed preeclampsia, retrodisplacement of the uterus, the hollow of the sacrum.), *adj+noun* (ածական+գոյական) (*renal function, renal biopsy, tubal segment, abdominal pregnancy, tubal abortion, vaginal bleeding, mild abdominal pain, intrauterine pregnancy, tubal ligation, early pregnancy*), *noun+noun* (գոյական+գոյական), մաս հարադիր բարդություններով¹⁰ կազմված շարություններ, որոնք ճանաչողական արժեք ունեն:

Որոշիչների բնույթն իմաստային առումով տարբերակվում է: Հետևյալ շարությունը՝ *uterine fundus, blood supply գոյական+գոյական* կառույցում, որը համապատասխանում է հայերենի սեռական հոլովով դրված գոյական հատկացուցչին (արգանդի հատակ, արյան մատակարարում) օգտագործվում է ուղիղ բառարանային իմաստով: Իհարկե, անգլերենի քերականության մեջ որոշիչ և հատկացուցիչ լրացումները տեսականորեն միմյանցից չեն տարբերակվում՝ դրանք անվանվում են մեկ ընդհանուր *attribute* բառով: Այդուհանդերձ, որոշիչ և հատկացուցիչ իմաստային տարբերություններն ակնհայտ կերպով անգլերենում դրսևորվում են ինչպես մյուս լեզուներում: Որոշիչ լրացումը լրացյալին բնութագրում է որակական տեսանկյունից, մինչդեռ հատկացուցիչ լրացումը ցույց է տալիս լրացյալի՝ ում կամ ինչին պատկանելը կամ վերաբերելը: Առանձին դեպքերում շարությունը իրար կարող են հաջորդել որոշիչ-որոշյալ հարաբերությամբ երկու գոյական (*uterine evacuation*): Բժշկագիտական տեքստում հանդիպում են մաս երկու և ավելի մասերից բաղկացած հարադիր բարդությամբ արտահայտված շարություններ, որոնցում առաջադաս մասը գրվում է գծիկով (*low-birth-weight infant, iron-deficiency anemia, intra-abdominal pregnancy*):

Օրինակ՝

During general anesthesia, agents believed to be safe include thiopental, muscle relaxants, narcotics, nitrous oxides, and low-dose inhalational agents such as halothane, enflurane, and isoflurane.

Complete blood count, ABO blood typing and Rh-factor, antibody screen, urinalysis and culture, serologic test for syphilis, rubella titer, Pap smear, cervical culture for gonorrhea, tuberculosis skin testing, hepatitis B surface antigen screen. Cervical culture for chlamidia is indicated in high-risk clients.

The spontaneous abortion rate does not appear to be increased unless associated with frequent crises and severe anemia. There is an increased incidence of perinatal mortality and low-birth-rate infants, but recent studies have shown generally good results.

Blood transfusions may be needed to treat vaso-occlusive crises and anemia.

Patients may have an exaggerated response to aspirin or other nonsteroidal anti-inflamatory drugs. Bleeding problems may be immediate or delayed even if adequate hemostasis was obtained at the time of surgery.

Վերոբերյալ շարությունները դրսևորվում են *որոշիչ-որոշյալ (ածական+ գոյական + գոյական, գոյական+դեդրայ+գոյական)* հարաբերությունների միջոցով. *vaso-occlusive crises, low-birth-weight infant, low-grade lymphomas, X-linked trait, reproductive-age women, long-term development, life-threatening hemorrhage, anti-inflamatory drugs, sex-linked-recessive disorder, well-preserved renal function, fetus-placenta, enzyme-linked immunoassay, x-ray film, low-dose inhalational agents,*

¹⁰ Սուքիասյան Ա.Մ. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 2008:

false-positive syphilis serology, low-dose aspirin, high-risk patients, large-gauge intravenous catheters, j-tip is passed into the vein, five-year survival, cheese-like discharge, x-ray mammography, high-grade and estrogen receptor-negative cancers, providone-iodine douche, post-term pregnancy, term-sized uterus, deep-tendon hyperreflexia, Doppler-sensed fetal movement, knee-chest position, low-grade fever, long-term bed, vibro cholera, a gram-negative aerobe.

Նմանօրինակ շարույթները մեծ թիվ են կազմում բժշկագիտական խոսքի մեր կողմից հետազոտվող ոլորտում, որն էլ թույլ է տալիս դրանք դիտարկել իբրև բժշկագիտական գրավոր խոսքի կայուն հատկանիշ: Հետաքրքրական է այն փաստը, որ գիտական ուղղվածություն ունեցող այլ խոսքային դրսևորումներում նման շարույթներից զծիկն (-) ընդհանրապես բացակայում է, ինչպես օրինակ *low incident power region, fields effect transistors, optical communications system*¹¹:

Առավել հետաքրքրական են այն շարույթները, որոնց կազմում ընդգրկված են հապավումներ. հաճախ նմանօրինակ շարույթը կարող է բաղկացած լինել մեկ բառից, որը չի գիտակցվում իբրև հապավում, այլ գործածվում է որպես լիարժեք բառ, հաճախ գոյականի կարգավիճակով. օրինակ՝ *CV*, որը տարբեր իրավիճակներում կարող է ընկալվել տարբեր կերպ: Մասնավորապես հայտնի է, որ *CV* հապավումը գործածվում է կենսագրականի իմաստով (*curriculum vitae*), մինչդեռ բժշկագիտական խոսքում նույն հապավումը նշանակում է սիրտ-անոթային (*cardio-vascular*) և բժշկագիտական տերմինի կարգավիճակ ունի: Այսինքն՝ բժշկագիտական խոսքում կիրառվող որոշ միավորների՝ հապավումների, բառարանային իմաստը բոլորովին չի համընկնում սովորական բացատրական բառարաններում համապատասխան նույնական տառային հապավման միջոցով ներկայացված միավորի իմաստի հետ:

Կայուն բառակապակցական շարույթները (օրինակ՝ *reproductive-age women, life-threatening hemorrhage*) բժշկագիտական խոսքում հաճախ ձեռք են բերում տերմինի կարգավիճակ: Օրինակ՝

The ability of the patient to maintain hemostasis when challenged by vaginal delivery or cesarean section is generally assumed by her caretakers. However, when these mechanisms fail to stem bleeding, the patient will be faced with a potential life-threatening hemorrhage: Այստեղ *hemorrhage* որոշյալի *life-threatening* որոշիչը ընդհանուր գործածական բառապաշարից մուտք է գործել գինեկոլոգիայի բնագավառ, *hemorrhage* գոյականի հետ ձևավորվել իբրև կայուն բառակապակցական տերմին-շարույթ, քանի որ *life-threatening* որոշիչը ամբողջացնում է *hemorrhage* գոյական որոշյալի արտահայտած գաղափարը:

Նշված զծիկավոր հարադրություն-տերմին շարույթների (*life-threatening hemorrhage - կյանքին սպառնացող արյունահոսություն, large-gauge intravenous catheters - խոշոր չափերի ձողախողովակ*) հայերեն համարժեքներն ունեն ավելի շատ նկարագրական-բացատրական բնույթ, մինչդեռ անգլերենում դրանք ստեղծում են դիպուկ պատկերային արտահայտություն և հատկանշական են բժշկագիտական գրքային խոսքին և, կարծես դիպուկ լինելուց բացի, հետապնդում են նաև խոսքն առավել հակիրճ ու սեղմ դարձնելու նպատակ, որի շնոր-

¹¹ Գասպարյան Ն. Արտոնագրային մասնագրի լեզվաճանաչական առանձնահատկությունները (ամերիկյան արտոնագրերի փաստական նյութի հիման վրա), Մենագր., Եր., Լուսակն հրատ., 2007:

հիվ խոսքը գերծ է մնում ավելորդ, տեղեկատվություն չպարունակող միավորներից: Ըստ էության, սրանով շեշտը դրվում է նվազագույն բառային միավորների գործածության միջոցով առավելագույն տեղեկատվություն հաղորդելու վրա:

Բժշկագիտական խոսքում հաճախ են հանդիպում **գոյական+շաղկապ+ածական+ գոյական (noun+and+adj+noun)** շարույթները, որոնք, օրինակ դեղամիջոցների օգտագործման հրահանգներում, ունեն ճանաչողական նշանակություն, ընդ որում, հանդես գալով վերնագրի կազավիճակով, գրվում են մեծատառերով. օրինակ՝ **գոյական+գոյական (noun+noun) – System Organ Class, ածական+գոյական (adj+noun) – Gastrointestinal Disorders, գոյական+շաղկապ+ածական+գոյական (noun+and+adj+noun) – General Disorders and Administration Site Conditions** և այլն:

Երրորդ գլխի՝ «Փոխաբերականությունն իբրև բժշկագիտական խոսքի բնութագրական հատկանիշ» ենթագլխում քննության ենք առնում փոխաբերությունն իբրև բժշկագիտական խոսքի կազմավորման կայուն հատկանիշ: Փոխաբերությունը¹², որտեղ էլ այն հանդիպի, միշտ հարստացնում է մարդկային գործողությունների հասկացումը, լեզվի գիտելիքները¹³: Նյութի վերլուծությունը լեզվաոճական ուսումնասիրության մեթոդի կիրառմամբ թույլ է տալիս հաստատել, որ բժշկագիտական խոսքում էական արժեք ունի բառերի գործածությունն ըստ բառարանային իմաստների (վերլուծության իմաստային մակարդակ), թեև հանդիպում են նաև շարույթներ, որոնք ունեն տերմինի կարգավիճակ և ստեղծված են փոխաբերական իմաստային հիմքի վրա¹⁴: Օրինակ՝

With preterm rupture of membranes, a sample of amniotic fluid from the vaginal pool should be obtained at this time to evaluate fetal lung maturity.

Vaginal pool բառակապակցական շարույթը բառացիորեն թարգմանվում է *հեշտոցային ավազան*, բանի որ, լինելով խոնավ գոգավոր միջավայր, նմանեցվում է ջրավազանի:

Գիտարկենք փոխաբերականության հետևյալ օրինակը՝

If the results are normal but there is a strong clinical suspicion of the disease, a urine collection can be obtained during a symptomatic attack to increase the diagnostic yield.

A symptomatic attack տերմին-շարույթը, որը բառացիորեն նշանակում է ախտանշանների հարձակում, հայերենում ունի *ախտանշանների նոսպյաձև սրացում* իմաստը: Թե՛ **vaginal pool** և թե՛ **a symptomatic attack** օրինակներում հստակ երևում է, որ գործ ունենք փոխաբերության հիմքի վրա ձևավորված տերմինների հետ, որոնք, նույնիսկ, չեն էլ գիտակցվում իբրև փոխաբերություն: Ըստ էության, մեր օրինակներում պատկերավորության կատեգորիան ստորակարգված է իմաստայինին, այսինքն՝ եթե սկզբնական, տերմինաստեղծման փուլում դա կարելի էր պատկերավոր և դիպուկ փոխաբերություն համարել, ապա այս

¹² Арутюнова Н.Д. Языковая метафора. // Лингвистика и поэтика. Москва, 1979.

¹³ Блек М. Метафора. Теория метафоры. Сборник: М., Прогресс, 1990, Лакофф Дж. Джонсон М., Метафоры, которыми мы живем. Едиториал УРСС.2004, Лю Цзя Вей. Научные метафоры. Дис. канд. Фил. наук. М., 1995.¹²

¹⁴ Սահակյան Լ.Ս. Փոխաբերական տեղաշարժի հիմնախնդիրը տերմինաստեղծման մեջ (անգլ.իրավ.տերմինների նյութի հիման վրա), բան.գիտ.թեկն. ատենախոս. սեղմագիր, 2012:

պահին նշված շարույթներն ընկալվում են իբրև սոսկ տերմիններ, որոնք երևույթների իմաստը փոխանցում են միանշանակորեն, հասկանալի և դիպուկ:

Հստակ ուշադրության արժանացնելով գիտական գրավոր արձակի քննության ոլորտում կատարված նախորդ ուսումնասիրությունների արդյունքները և հենվելով բժշկագիտական նյութի մեր քննության վրա՝ կարելի է խոսքի այդ տարատեսակը սահմանել իբրև ինքնուրույն, գիտական հիմքի վրա ձևավորված բնագավառ, որին հատուկ են սեփական ճանաչողական կառույցներ ինչպես բառապաշարի, այնպես էլ ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Համեմատելով գիտական տեքստի հետ ընդհանրապես՝ պարզում ենք, որ բժշկագիտական խոսքի բնագավառն ունի հատկանիշների այնպիսի բազմություն, որով այն տարբերվում է գրավոր գիտական խոսքի այլ տեսակներից:

Բժշկագիտական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունների քննությունն արտալեզվական գործոնների հաշվառումով թույլ է տալիս կատարել մի շարք էական **եզրակացություններ**.

1. Բժշկագիտական արձակում իբրև խոսքի հիմնական գործառույթներ՝ կարելի է առանձնացնել հաղորդման, ուղղորդման, համոզման գործառույթները, որոնց փոխներթափանցման արդյունքում, ընդհանրացման և վերացարկյան մեթոդների կիրառմամբ, ընդգծվում է երևույթների ու փաստերի պատճառահետևանքային կապը՝ տանելով համոզիչ տրամաբանական ելքի: Համոզման ու ներազդման՝ իբրև ճանաչողական գործընթացի կարևորագույն մասերի, իրացումն ուղղված է վերաբերյալ մատնանշելու և հասցեատեր-բժշկին (բուժող բժիշկ) հորդորելու: Երբ հասցեագրող բժշկի (գրքի հեղինակ) և հասցեատեր բուժող-բժշկի միջև տեղի է ունենում շփում, տեղեկատվություն փոխանցել-ընդունելու միջոցով, իրացվում է խոսքարկյան գործառույթը: Նշված բոլոր գործառույթների փոխներթափանցումն ու փոխկապակցվածությունն ուղղված են որոշակի հարողակցական նպատակի իրագործման:

2. Տերմինաբանության միջոցով բառապաշարի հարստացումը լեզվի զարգացման գլխավոր գործոններից է, սակայն բժշկության մեջ այս կամ այն տերմինի իմաստային նշանակությունը միայն այն դեպքում է դառնում համընդհանուրի սեփականություն, երբ այն գրանցված է ճշգրիտ տերմինային արտահայտությամբ և բացառում է տարբեր մեկնաբանություններ, պարզ է ու միանշանակ: Այս առումով նշանակալի դեր ունեն տերմին-էպոնիմները:

- Բժշկագիտության մեջ իր ուրույն տեղն ունի հունա-լատինական տերմինաբանությունը, որը տարբեր ազգերի գիտնականների մասնագիտական շփումը միջազգային ասպարեզում դարձնում է դյուրին:
- Բժշկագիտության բնագավառում գործածվող բառապաշարի շերտերի և դրանց հարաբերակցության դինամիկայի, ինչպես նաև գիտական շարադրանքում գործածվող բառապաշարի հիմնական առանձնահատկությունների համակողմանի վերլուծությունը բացահայտում է, որ անգլերեն ընդհանուր գործածական բառապաշարի շերտին պատկանող որոշակի բառեր և բառակապակցական միավորներ բժշկագիտական խոսքում դրսևորում են նոր հատկանիշներ՝ ստանալով տերմինակերպ միավորի կամ տերմինաբանական կապակցության կարգավիճակ: Այդ տերմինները և տերմինակերպ միավորները ճանաչողական արժեք ունեն և նպաստում են բժշկագիտական խոսքի լիարժեք ընկալմանը:

- Անգլերեն բժշկագիտական տերմինաբանության շրջանակներում հանդիպում են շարույթներ, որոնք իրենց կազմում ունեն հապավումներ (սկզբնատառային, տառ-բառային, տառ-վանկային և երբեմն խառը տիպի): Դրանք ընկալվում են որպես լիարժեք բառեր, հիմնականում գոյականի կարգավիճակով, և դրանց իմաստը չի համընկնում սովորական բացատրական բառարաններում համապատասխան նույնական հապավման միջոցով ներկայացված միավորի իմաստին:
- Իբրև նվազագույն գործառական-հաղորդակցական միավոր՝ բժշկագիտական տեքստի համար սահմանում ենք շարույթը՝ ելնելով նրա գործառական-ճանաչողական արժեքից: Այս առումով առանձնացնում ենք գոյականական, ածականական, թվականական և մակբայական շարույթները, որոնց շարքում զգալի կարևորություն ունի թվականականը, որը մեր նյութում ոճակազմիչ է, քանի որ փոխանցում է կարևոր բժշկագիտական տեղեկատվություն: Հանդիպում են նաև հարադրավոր բարդություն կազմող շարույթներ:

3. Լեզվաոճական վերլուծության մեթոդի կիրառությունը բացահայտում է, որ բժշկագիտական խոսքում էական արժեք ունի բառերի գործածությունն ինչպես ըստ բառարանային իմաստների, այնպես էլ փոխաբերական իմաստային հիմքի վրա: Բժշկագիտական խոսքի շրջանակներում փոխաբերականացումն, ըստ էության, տերմինաստեղծման գործառույթ է կատարում:

4. Ներկա անորոշի (the Present Indefinite) կիրառությունն ուղղված է ընդգծելու ընդունված *ճշմարտություն*, որն օգնում է բժշկին նրա մասնագիտական հետագա գործունեության մեջ: Վաղակատար ներկյան գործածվում է հիմնականում կրավորական ձևով և ցույց է տալիս նախորդ փորձի և ներկայի հարաբերակցությունը: Անցյալ անորոշ (the Past Indefinite) ժամանակաձևի կիրառումը ոչ միայն միտում ունի կատարելու իր քերականական գործառույթը, այլև նշելու նախկինում կատարված բուժման փորձի ոչ արդյունավետ և հուսալի լինելը ներկայում, այսինքն՝ այն ունի նաև արտալեզվական երանգավորում:

5. Եղանակավորման կարգը դրսևորվում է հիմնականում *may* և *should* եղանակավորող բայերի գործածությամբ:

6. Շրջադասության դեպքերը **with, although, even with, still, in ...** միավորներ պարունակող ներմուծող կառույցների միջոցով նույնպես շատ կարևոր դեր են կատարում ուշադրության ակտիվացման գործում:

Անգլերեն բժշկագիտական խոսքի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս.

1. սահմանել տերմին-շարույթը որպես կայուն ճանաչողական-ոճակազմիչ տարր և բժշկագիտական խոսքի նվազագույն գործառական-հաղորդակցական միավոր.
2. տերմինաբանության համակարգի առանձնահատկությունների և քերականական որոշակի կարգերի կայուն ճանաչողական-ոճակազմիչ գործառույթի շնորհիվ բժշկագիտական խոսքը կարելի է դիտարկել իբրև գիտական խոսքի ուրույն ենթաոճային դրսևորում:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակումներում.

1. Բժշկագիտական տեքստի որոշ լեզվաոճական առանձնահատկությունների շուրջ // Հանրապետական գիտաժողովի նյութեր. Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Իրավունք, 2009, էջ 110-114:
2. Հին հունական և լատինական տերմինների կիրառությունը տեսական և գործնական բժշկության մեջ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում. գիտական աշխատությունների ժողովածու, № 11, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 200-207:
3. Եղանակավորող բայերն իբրև բժշկագիտական տեքստի ոճակազմիչ տարր // Թարգմանության տեսական և գործնական հարցեր. գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 185-189:
4. Բժշկագիտական տեքստի բառապաշարի առանձնահատկությունները // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում. գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Չամբակ-97 հրատ., 2011, էջ 38-45:
5. On Some Peculiarities of Medical Slang. // Third International Conference 4-8 Oct., 2011, Language, Literature & Art In Cross-Cultural Contexts, Yerevan, YSU Press, 2011. – P.112.
6. On Some Peculiarities of Medical Slang. // Armenian Folia Anglistika, 2(9)2011, Yerevan, Lusakn Publishers, 201. – P.44-47.
7. Շարույթների գործառական արժեքը բժշկագիտական տեքստում // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում. գիտական հոդվածների ժողովածու, № 4, Երևան, Լուսակն հրատ., 2012, էջ 49-53 (համահեղինակ Գ-ասպարյան Ն.Հ.):

ОГАНЯН МАРИАННА МИГРАНОВНА
СТИЛЕ-ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ АНГЛИЙСКОЙ
МЕДИЦИНСКОЙ РЕЧИ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07 – “Германские языки”

РЕЗЮМЕ

Реферируемая диссертация посвящена исследованию одной из наиболее актуальных проблем в области функциональной стилистики, а именно – лингвостилистических особенностей английской речи, применяемой в сфере медицины. Исследованный фактический материал основывается на американских научных исследованиях в области гинекологии, а также медицинских словарей.

Целью настоящей работы является определение места и роли данной разновидности английской речи в сложной системе функциональных стилей, а также разъяснение того, под воздействием каких лингвистических и экстралингвистических факторов формируются ее стилеразличительные особенности.

Для достижения поставленной цели в работе выдвигаются следующие конкретные задачи.

1. Дифференцировать место и роль медицинской речи в функциональной стиле-жанровой сфере, опираясь на теоретико-практические результаты предыдущих исследований в области изучения научной письменной прозы, а также данные результатов исследования терминосистемы медицинской речи.
2. Рассмотреть основные функции речи, реализуемые в медицинских текстах, с целью определения результата взаимопроникновения этих функций как нового релевантного стиле-жанрового качества.
3. Выявить минимальную функционально-коммуникативную единицу медицинской речи и путем применения лингвостилистического анализа попытаться определить когнитивные и стилеобразующие компоненты, благодаря наличию которых медицинская речь характеризуется как своеобразное проявление научной речи.
4. Подвергнуть всестороннему анализу лексические слои, применяемые в медицинской сфере, а также динамику их соотношения, рассматривая проблему с точки зрения стилистических особенностей научной лексики.
5. Определить функционально научный характер медицинской речи через исследование терминологических синтагм.
6. Рассмотреть имеющие когнитивную значимость лексико-морфологические особенности медицинской речи, которые обусловлены экстралингвистическими факторами.

Актуальность настоящего исследования обусловлена необходимостью изучения функционально-стилистических характеристик данной разновидности

английской речи, особенно в связи с возрастанием и укреплением международных контактов в сфере медицины.

Новизна работы состоит в том, что впервые посредством анализа языкового стиля и терминологии сделана попытка определить функционально-стилевую характеристику научно-медицинской речи.

Теоретическая значимость работы состоит в том, что она имеет определенный вклад в сфере теории функциональной стилистики.

Работа имеет важное **практическое значение**. Она может применяться в спец. курсах по стилистике и функциональной стилистике и на спец. семинарах, где изучаются принципы перевода медицинских текстов. Результаты исследования могут также находить применение в рамках практического курса по ESP для медиков.

Работа состоит из введения, трех глав, списка использованной литературы и списка используемых интернет-ресурсов. Во введении представлены тема данной диссертации, ее цели и задачи, обосновывается научная новизна и актуальность, теоретическая и практическая значимость данного исследования. В первой главе затрагиваются стили-жанровые особенности лексических слоев английской медицинской речи, где главную роль играют словосочетания, имеющие статус терминов. Во второй главе исследуются грамматические особенности медицинской речи, делается акцент на особенностях временных форм, модальных глаголов и эмфатических конструкций. Третья глава состоит из пяти параграфов, где исследуются терминообразовательный процесс в медицинской речи, функционально-когнитивная роль терминов, греко-латинские заимствования, функциональная роль терминов-эпонимов в медицинской речи, а также метафора как характеризующий признак медицинской речи.

MARIANNA M. OHANYAN

THE FUNCTIONAL AND GENERIC PECULIARITIES
OF MEDICAL ENGLISH

SUMMARY

Medicine is a field where innovation and development are constant. *The focus* of the present research is the sphere of functional stylistics, mainly the linguostylistic peculiarities of medical-gynecological English. **The primary goal** of the present research is not only to show the place of Medical English in the system of functional styles but also to define the linguistic and extralinguistic factors, which make this speech variety different as compared to other manifestations of scientific style. Due to its functional-stylistic peculiarities Medical English can be considered as a substyle of scientific style. To achieve the goal several different tasks have been put forward:

1. To establish the place and role of Medical English in the functional-generic domain.
2. To study the main functions of speech realized in Medical English.
3. To bring out the cognitive-stylistic characteristics of Medical English through linguistic analysis and to define the ultimate stylistic-communicative element which performs cognitive and style-forming functions in Medical English.
4. To analyze the layers of the vocabulary of medical texts, their correlation as compared to other varieties of scientific style.
5. To study terminological problems the solution of which will reveal the functional-stylistic orientation of Medical English in the system of Scientific Style.
6. To study and to define those morphological and syntactic peculiarities which have a cognitive function based on the extralinguistic factors due to which Medical English differs from other speech varieties of Scientific Style.

The novelty of the work is that by means of linguostylistic and terminological analysis an attempt is made to investigate and to define functional-stylistic characteristic features of Medical English and to establish its place in the functional domain of the English language. **The vital importance** of the subject is accounted for by the decisive and important role Medical English plays in our life. **The practical significance** of the research is established with the efficient usage of the outcomes in the course of functional stylistics, as well as teaching English for specific purposes to both medical students and students of Translation Studies.

The paper consists of an introduction, 3 chapters supplied with notes, a conclusion, a bibliography and a list of Internet sources.

Introduction presents the goals and objectives, the novelty, the vital importance, the theoretical and practical significance of the thesis, as well as the implemented approaches to achieve the above mentioned objectives.

Chapter One covers a detailed analysis of the layers of the vocabulary and their correlation in establishing the place of Medical English in the system of functional styles.

Chapter Two presents a study of grammatical peculiarities of medical texts, including modal verbs, mainly *may* and *should*, used in affirmative constructions, emphatic constructions with *although, still, even with* and with the introductory *in...* which are stylistic markers of Medical English.

Chapter Three establishes the importance of terms and terminological word-combinations in Medical English. Many new scientific terms and concepts appear in medicine and many old ones undergo some changes. The investigation of these changes makes the research of the tendencies of terminological developments possible. Special attention is paid to Greek and Latin borrowings. They have paramount importance for doctors and pharmacologists. This chapter also deals with *the study of metaphors*. The use of metaphors, wherever they occur, enriches the cognition of human actions. There are collocations in medical texts which have the status of a term obtained as a result of metaphorisation. The research has shown that the category of imagination is subordinated to the semantic one. Another important issue studied in this chapter is the functional value of *term-eponyms* in Medical English. The use of eponyms is combined with some medical maneuvers, interferences, positions. There are a lot of eponyms which have two or more synonyms in Medical English. Sometimes the name of the same author is ascribed to two or more diseases, symptoms, syndromes which he has already described. And, finally, this chapter presents a thorough investigation of the functional value of terms and *terminological collocations* in Medical English (noun collocations, collocations with adverbs, numerals and adjectives) which leads to valuable findings concerning the place of Medical English in the domain of Scientific English. As far as the grammatical peculiarities of this specific speech variety is concerned, it should be mentioned that the functional-grammatical peculiarities include the specific use of certain tense forms (the Present Indefinite, the Past Indefinite, the Future Indefinite, the Present Perfect, both Active and Passive), the use of certain modal verbs (*may* and *should*) and *inversion*. The numeral and adjective collocations have a cognitive function as they transfer important information. Medical texts contain abbreviations which are regarded as separate words – mainly as nouns. The use of juxtapositional syntagmatic patterns acquire the status of terms. Noun+noun, noun+adverb+noun, adjective+noun+noun, adjective+numeral are the most common syntactic patterns found in medical texts. The syntagmatic pattern noun+and+adjective+noun is mainly used in the instructions of medical leaflets.

Conclusion presents the main findings of the research. It is established that:

- The term *syntagm* is the ultimate functional communicative unit of Medical English which performs a cognitive and style forming function.
- Due to the specificity of medical terminology and certain grammatical categories Medical English can be viewed as a Substyle of Scientific English.